

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 19

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

30.07.2018թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Խաչատրյանը - մարզպետի տեղակալ
- Ա.Ղուկասյանը - մարզպետի տեղակալ
- Ն.Սարգսյանը - աշխատակազմի ղեկավար
- Գ.Հակոբյանը, Ա.Բեջանյանը, Հ.Մկրտչյանը - մարզպետարանի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ
- Լ.Ալանյանը - մարզպետի խորհրդական

Օր ա կ ա ր գ ու մ`

1.Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների մասին .

/Զեկ. Ն.Սարգսյան, Ա.Խաչատրյան, Ա.Ղուկասյան /

2. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետի տեղակալներ Ա.Խաչատրյանին, Ա.Ղուկասյանին, Ս.Սարուխանյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետ Հ.Պապոյանին և ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին`

1- շաբաթյա ժամկետում ուսումնասիրել, պարզել համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ցածր մակարդակի պատճառները և անհրաժեշտ աշխատանքներ տանել հավաքագրման մակարդակի բարձրացման ուղղությամբ:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության պետ Գ.Հակոբյանին`

2-օրյա ժամկետում պլանավորել և կազմակերպել հանդիպում Սպիտակի տարածաշրջանի համայնքների ղեկավարների մասնակցությամբ, ինչպես նաև առաջարկել Սպիտակի ու Գուգարքի տարածաշրջանների համայնքների ղեկավարներին համայնքներում անասնաբույժներ ընդունելու և վերջիններիս հետ պայմանագրեր կնքելու վերաբերյալ:

Invalid signature

X 

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ